

Արձանագրություն N «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05»-03

**«ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

16 սեպտեմբերի 2020թ, ժամը 11:00, Նոր Գեղի համայնք,
Ֆ.Թևոսյան 64, Նոր Գեղի համայնքապետարան

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ՝ Ա. Հղաթյան
անդամներ՝ Ա. Մկրտչյան, Լ. Բարսեղյան
քարտուղար՝ Կ. Հայրապետյանը

Օրակարգ

**<<ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 >> ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը
հաստատելու մասին**

(Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հղաթյան)

<<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի և << ԳԲՔԱ-ի
կողմից կայացված որոշման մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

1.<<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի և << ԳԲՔԱ-ի
կողմից կայացված որոշման մասին

(Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հղաթյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 28.07.2020թ.-ին <<ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 >> ծածկագրով ԳՀ
ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի
34-րդ հոդվածի պահանջներով <<Ֆրիներջի>> ՍՊ Ընկերությունը ճանաչվել էր ընտրված
մասնակից:

07.08.2020թ.վականի /հրապարակվել է 10.08.2020թ./ .<<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍԵՄ
ՍՈԼՈՒԹԻՈՆՍ>> ՍՊԸ-ի կողմից ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
/Այսուհետ՝ ԳԲՔԱ/ ներկայացվել է բողոք՝ Պարտավորեցնել ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարել թիվ 2
արձանագրությամբ <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին
որոշումը և վերջինիս հայտը մերժելու մասին որոշում կայացնել:

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի ԳԲՔԱ-
ին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն
օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը
հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված
որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

07.09.2020թ./հրապարակվել է 09.09.2020թ./ ՀՀ Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձը որոշել է <<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ>> ՍՊԸ-ի
ներկայացված բողոքը բավարարել մասնակի, այն է՝

07.09.2020թ./հրապարակվել է 09.09.2020թ./ ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող որոշել է <<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ>> ՍՊԸ-ի ներկայացված բողոքը բավարարել մասնակի, այն է՝

- 1) Պարտավորեցնել ԿՄԼԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,
- 2) Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել ԿՄԼԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ, մերժել:

2. Հանձնաժողովը որոշեց

2.1 Հիմք ընդունելով թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 07.09.2020 թվականի կայացրած որոշումը՝

- 1) Դադարեցնել ԿՄԼԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով գնանշման ընթացակարգի <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշումը:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի համաձայն կասեցնել գնահատման գործընթացը և նույն օրը սույն ԿՄԼԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում՝ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման համար:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:



3. Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2020 թվականի սեպտեմբերի 17-ին ժամը 17:00-ին, Կոտայքի մարզի, Նոր Գեղի համայնքի, Ֆ.Թևոսյան 64 հասցեում:

Հանձնաժողովի

Նախագահ

անդամներ

Քարտուղար

 Ա. Հրապոյան
 Ա. Մկրտչյան
 Լ. Բարսեղյան
 4. Հայրապետյան